

պատճառ կ'ըլլայ : Սակաբերութիւնը բաւական չէ . այնչափ խորունկ ու ճիշդ հաշիւներով հաստատեց աս իր կարծիքն որ ինչուան ան մոլորակին մեծութիւնը , շրջանը , զանգուածը , ու արեւէն ունեցած հեռաւորութիւն ալ որոշեց : Լինկէ ետքը Պերլինի հըռչակաւոր կալէ աստղաբաշխին գրեց իր կարծիքը , ու խնդրեց որ անիկայ իրեն նրբամիտ ու ճարտար հաշիւներով ու գիտողութեամբ փնտռէ ան մոլորակը իր ցրցուցած տեղուանքը : Կալէն ալ սեպտեմբերի 23^{ին} գիշերը Պերլինի դիտարանէն դիտեց՝ գտաւ Լըվելիէին գուշակած մոլորակը , որ ինչուան հիմա մէկ երկնացուցի մը վրայ ալ նշանակած չէր : Մէկէն 'ի մէկ Լըրոպայի ուրիշ դիտարաններէն ալ տեսնուեցաւ ան նոր մոլորակը , ու ամէնքն ալ մեծամեծ գովեստներ գրեցին Լըվելիէին ու Կալէին . և Վաղղիոյ ճեմարանը մօտերս երկուքին ալ Լեգէոն պատուոյ ըսուած ասպետութեան նշանը տուաւ :

ԶՈՒԱՐԺԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լէլու չգիտնալու փորձանքները :

Մեծն Փեդերիկոս սովորութիւն ունի եղեր որ իրեն թիկնապահներուն կարգը նոր զինուոր մը գալուն պէս՝ աս իրեք հարցմունքը կ'ընէ եղեր անոր . “Տարիքդ քանի է . Ո՛րչափ ատեն է որ իմ ծառայութեանս մէջ ես . Ստակդ ու հագուստդ ու զածիդ՝ պէս են ” : Վաղղիացի երիտասարդին մէկն ալ կը փափաքի թագաւորին թիկնապահներուն մէջը մտնել , բայց գերմաններէն չգիտեր եղեր . ուստի զօրապետը կ'ըսէ իրեն թէ “Վիտնաս որ թագաւորը քեզի աս իրեք հարցմունքը կ'ընէ . նայէ որ պատասխանները սերտես , հարցընէ-

լուն պէս՝ կը զուրցես , ամօթով չես մնար ” : Վաղղիացին շուտ մը կը սորվի ան իրեք պատասխանը գերմաններէն , ու երկրորդ օրը թագաւորին առջևը կ'ելլէ : Կը սկսի թագաւորը երկրորդ հարցմունքէն , “Ո՛րչափ ատեն է որ իմ ծառայութեանս մէջ ես ” , կ'ըսէ : “Վսանումէկ տարի ” , կ'ըսէ զինուորը : Թագաւորը կը նայի կտրձին կերպարանքը որ հազիւ թէ քսան տարեկան է , կը զարմանայ թէ ինչպէս կրնայ ըլլալ որ քսանումէկ տարի զինուորութիւն ըրած ըլլայ . ուստի կը հարցընէ թէ “Տարիքդ քանի է :—Մէկ տարի մըն է՝ հրամանոցդ շնորհքով ” , կ'ըսէ զինուորը : Փեդերիկոս առջինէն ալ աւելի զարմացած՝ կը զուրցէ բարձր ձայնով թէ “Կամ դուն խելքդ կորսնցուցեր ես՝ կամ ես :—Լըկուքն ալ , տէր արքայ ” , կ'ըսէ զինուորը : Լին ատեն կը տաքնայ թագաւորն ու կ'ըսէ . “Լին առաջին անգամն է որ խենթ սեպուեցայ զինուորներուս առջևը ” : Օ ինուորը կը նայի որ գերմաններէն խօսելու ինչ պաշար որ ունէր՝ լմնցաւ , լուռ կը կենայ . երբոր կը դառնայ թագաւորը նորէն կը հարցընէ իրեն թէ ինչ ըսել կ'ուզես այդպիսի խօսքերով , զինուորը կը դառնայ գաղղիարէն պատասխան կուտայ թէ “Լինն ինքն գերմաններէն չեմ գիտեր ” : Լին ատեն կը ծիծաղի թագաւորն ու կը խրատէ զինքն որ իր տէրութեան լեզուն սորվի , ու իրեն պարտքերը լաւ կատարէ :

Մէկն որ իր լեզուն ծուռումուռ կը խօսի , մի կարծեր թէ օտար լեզուն լաւ խօսի . իսկ թէ յանկարծ խօսի նէ , վրան մեծ համարում մը մի առնէր :